ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-20/62

ք. Երևան «11» 09 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ. Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1670000 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուը այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Ազատության 24/11
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
Հ/Հ 900011033447	Հ/Հ 22030012367000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00849407
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Վ. Մնացականյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 11 » 09 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-20/62 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	22111100/26	Ուսուցողական գրքեր-1	Գնման առարկա է հանդիսանում **«Հայոց լեզվի կետադրության ձեռնարկ»** գիրքը (հեղ.՝ Վ. Ա. Սահակյան, Վ. Վ. Սահակյան) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Սույն գրքում հանգամանորեն ներկայացված են ժամանակակից հայերենում գործող կետադրության հիմնական կանոնները՝ ի մի բերելով կամ համադրելով ու զուգադրելով դասագրքերում և առանձին ձեռնարկներում արտահայտված տեսակետները, կարծիքներն ու դիտարկումները: Ուսուցողական նպատակով տրված են մարզողական վարժությունների ու համր բնագրերի նմուշներ: Նախատեսված է միջին և բարձր դասարանների աշակերտների, դիմողների, ուսանողների և ուսուցիչների համար: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 14.5 x 20 սմ Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	հատ	100	800	80000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
2	22111100/27	Ուսուցողական գրքեր-2	Գնման առարկան հանդիսանում է **«Գրավոր խոսքի զարգացման ուղեցույց»** գիրքը (հեղ.՝ Վ. Ա. Սահակյան, Վ. Վ. Սահակյան) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Գրքում պարզ ու մատչելի ձևով տրված են հայերենի ուղղագրության և կետադրության ամենակարևոր ու ամենաանհրաժեշտ կանոններն ու դրանց կիրառության դեպքերը: Գրքում տեղ են գտել տողադարձի, բաղադրյալ հատուկ անունների ուղղագրության վերաբերյալ վերջին որոշումները: Քերականության բաժնում հանգամանորեն քննվում են բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու, ինչպես նաև ուղղակի խոսքով նախադասությունները անուղղակի վերածելու ընթացքում կատարվող ոճական ու քերականական փոփոխություն-	հատ	100	1200	120000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			ները: «Կապակցված խոսք» բաժնում քննության ե նառնված բառերի ճիշտ ընտրության, բառօգտագործման և խնդրառության վերաբերյալ հարցեր, տրված են ամենագործնական դարձվածքների համանունների, շրջասույթների, համառոտ ցանկեր: Գրքի երկրորդ մասում տրված են համապատասխան գեղարվեստական օրինակներ, առաջադրանքներ, վարժություններ, համր բնագրեր, ինչպես նաև քերականական առաջադրանքով շարադրությունների ու թեստերի նմուշներ: Գրքի վրա աշխատելիս լայնորեն օգտվել ենք հրապարակի վրա եղած մասնագիտական գրականությունից: Նախատեսված է միջին և բարձր դասարանների աշակերտների, դիմողների, ուսանողների և ուսուցիչների համար: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 14.5 x 20 սմ Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 352 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
3	22111100/28	Ուսուցողական գրքեր-3	Գնման առարկան հանդիսանում է **«Համառոտ պատմություն հայոց»** գիրքը (հեղ.՝ Վ. Դադության) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Վահագն Դավթյանի այս երկը մեր պատմության կարևորագույն փաստերի և դրանց բանաստեղծական ընդհանրացումների մի յուրօրինակ հյուսվածք է, որ թեև համառոտ, սակայն ամբողջական պատկերացում է տալիս հայ ժողովրդի անցած հերոսական ու ողբերգական ուղու, ինչպես նաև մեր ժամանակներում նրան վիճակված փորձությունների մասին: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 14.5 x 20 սմ Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 112 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	հատ	200	800	160000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
4	22111120/35	Գրադարանի գրքեր-1	Գնման առարկա է հանդիսանում **«Հայ արվեստի նշանավոր գործիչներ. Գևորգ Բաշինջաղյան»** գիրքը (կազմող՝ Նվեր Վիրաբյան) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Գիրքը միտում ունի նոր սերունդներին հաղորդակից դարձնել մեր նշանավոր արվեստագետների կյանքին ու գործունեությանը, նրանց այն ստեղծագործություններին ու կատարումներին, որոնք, իրավամբ, մտել են համաշխարհային մշակույթի ոսկե գանձարանը: Դրանցից յուրաքանչյունը ընդգրկում է արվեստի բազմազան ճյուղերում իրենց հանճարն ու տաղանդը դրսևորված հայազգի վառ անհատականությունների մտքերն ու խոհերը, հայ և այլազգի մեծերի կարծիքները նրանց մասին և հուշեր, ստեղծագործությունների վերլու-	հատ	200	600	120000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			ծություններ: Գիրքը հասցեագրված է մշակութաբանական ուղղվածություն ունեցող տարբեր ուսումնական հաստատությունների սովորողներին, ուսանողներին, մասնագետներին և, առհասարակ, հայ արվեստի պատմությամբ ու ներկայով հետաքրքրվող ընթերցասեր հասարակությանը **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 17 x 24 սմ Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 56 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ լամինացիա, ամրակար					
5	22111120/36	Գրադարան ի գրքեր-2	Գնման առարկա է հանդիսանում **«Հայ արվեստի նշանավոր գործիչներ. Հակոբ Կոջոյան»** գիրքը (կազմող՝ Նվեր Վիրաբյան) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Գիրքը միտում ունի նոր սերունդներին հաղորդակից դարձնել մեր նշանավոր արվեստագետների կյանքին ու գործունեությանը, նրանց այն ստեղծագործություններին ու կատարումներին, որոնք, իրավամբ, մտել են համաշխարհային մշակույթի ոսկե գանձարանը: Դրանցից յուրաքանչյունը ընդգրկում է արվեստի բազմազան ճյուղերում իրենց հանճարն ու տաղանդը դրսևորված հայազգի վառ անհատականությունների մտքերն ու խոհերը, հայ և այլազգի մեծերի կարծիքները նրանց մասին և հուշեր, ստեղծագործությունների վերլուծություններ: Գիրքը հասցեագրված է մշակութաբանական ուղղվածություն ունեցող տարբեր ուսումնական հաստատությունների սովորողներին, ուսանողներին, մասնագետներին և, առհասարակ, հայ արվեստի պատմությամբ ու ներկայով հետաքրքրվող ընթերցասեր հասարակությանը **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 17 x 24 սմ Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 64 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ լամինացիա, ամրակար	հատ	200	600	120000	Մինչև ս.թ. սեպտեմբեր ի 30-ը
6	22111120/37	Գրադարան ի գրքեր-3	Գնման առարկա է հանդիսանում **«Հայ արվեստի նշանավոր գործիչներ. Ալեքսանդր Թամանյան» գիրքը** (կազմող՝ Նվեր Վիրաբյան) **Բովանդակային չափանիշներ** Գիրքը միտում ունի նոր սերունդներին հաղորդակից դարձնել մեր նշանավոր արվեստագետների կյանքին ու գործունեությանը, նրանց այն ստեղծագործություններին ու կատարումներին, որոնք, իրավամբ, մտել են համաշխարհային մշակույթի ոսկե գանձարանը: Դրանցից յուրաքանչյունը ընդգրկում է արվեստի բազմազան ճյուղերում իրենց հանճարն ու տաղանդը դրսևորված հայազգի վառ անհատականությունների մտքերն ու խոհերը, հայ և այլազգի մեծերի կարծիքները նրանց մասին և հուշեր, ստեղծագործությունների վերլուծություններ:	հատ	200	600	120000	Մինչև ս.թ. սեպտեմբեր ի 30-ը

			Գիրքը հասցեագրված է մշակութաբանական ուղղվածություն ունեցող տարբեր ուսումնական հաստատությունների սովորողներին, ուսանողներին, մասնագետներին և, առհասարակ, հայ արվեստի պատմությամբ ու ներկայով հետաքրքրվող ընթերցասեր հասարակությանը **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 17 x 24 սմ Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 72 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ լամինացիա, ամրակար					
7	22111120/38	Գրադարանի գրքեր-4	Գնման առարկան հանդիսանում է **«Նշանավոր հայուհիներ»** գիրքը (հեղ.՝ Ս. Ա. Ավագյան) և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Գրքում տրված են 300-ից ավելի հայուհիների համառոտ կենսագրականներ, հայուհիներ, որոնք իրենց գործունեությամբ նպաստել են հայ ժողովրդի, Հայաստանի բարգավաճմանը, հայ մարդու գոյատևմանն ու փառաբանմանը: Նրանք նշանավոր են տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, ռազմական, սպորտի, բարեգործության և այլ բնագավառներում: Կենսագրականները դասդասված են ըստ ժամանակագրական կարգի, ցանկում՝ ըստ այբուբենի: Գիրքը նախատեսված է ընթերցող լայն հասարակայնության համար: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 14.5 x 20 սմ Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 368 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	հատ	300	1500	450000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
8	22111130/7	Բառարաններ-1	Գնման առարկան հանդիսանում է **«Հոմանիշների, հականիշների, դարձվածքների դպրոցական բառագիրք»** բառարանը (հեղ.՝ Վ. Ա. Սահակյան, Վ. Վ. Սահակյան) և դրա «Ներածություն» բաժնի և առաջին էջերի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Հոմանիշների բառարանն ընդգրկում է շուրջ 12 հազար բառ, հականիշներինը՝ մոտ 2900 բառ, դարձվածքներինը՝ 3600: Դրանք կազմելիս օգտվել ենք Ա. Սուքիասյանի, Էդ. Աղայանի, Ալ. Մարգարյանի, Պ. Բեդիրյանի, Ս. Գալստյանի, Լ. Միրզոյանի, Խ. Աղաջանայնի բառարաններից, տեղեկատու այլ նյութերից: Բառացանկերը կազմելիս նկատի են առնվել բուհերի ընդունելության քննությունների հարցաշարերում ընդգրկված հոմանիշների ու հականիշների վերաբերյալ առաջադրանքները: Ձետեղված են «Հայոց լեզվի շտեմարանի» (2001 թ.) որոշ առաջադրանքների կատարման նմուշներ: Հավելվածում տրված են նաև համանունների, բաղադրյալ հատուկ անունների, գոյականի հոգնակի թվի կազմության վերաբերյալ բառացանկեր: Սույն բառագիրքը օգտակար կարող է լինել միջն. դպրոցի աշակերտներին, դիմողներին,	հատ	200	1000	200000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			ուսանողներին և ուսուցիչներին: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 14.5 x 20 սմ Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 336 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
9	22111130/5	Բառարանն եր-2	Գնման առարկան հանդիսանում է **«Ուղղագրության, կետադրության և խոսքի զարգացման ուղեցույց»** բառարանը (հեղ.՝ Վ. Ա. Սահակյան) և դրա «Ներածություն» բաժնի և առաջին էջերի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Սույն ձեռնարկում հանգամանորեն ներկայացված են ժամանակակից հայերենում գործող ուղղագրության կետադրության հիմնական կանոնները: Ուսուցողական նպատակով տրված են մարզողական վարժությունների ւ համր բնագրերի նմուշներ, որոնց մի մասը կազմված է ԳԹԿ-ի «Շտեմարաններ»-ի (2014 թ.) առաջադրանքների նմանությամբ: Տրված են թելադրության, փոխադրության և շարադրության մնուշներ: Առանձին գլուխ է նվիրված խոսքի զարգացման աշխատանքներին. Շարադրության նա-խապատրաստման և անցկացման, նախադասությունների փոխակերպման, ինչպես նաև բառագործածության և խնդրառության հարցերին: Նախատեսված է միջին և բարձր դասարանների աշակերտների, դիմողների և ուսանող-ների համար: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 14.5 x 20 սմ Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 1 + 1 Էջերի քանակը՝ 304 Կազմի թուղթը՝ ֆուտբորտ 270 գ/քմ Կազմի գույները՝ 4+0 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	հատ	200	1500	300000	Մինչև ս.թ. սեպտեմբեր ի 30-ը

<u>1-9չափաբաժինների համար.</u>

1. Ապրանքները թողնվում են «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին ի պահ՝ մինչև ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից տրամադրվի առաքման հասցե: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է Կատարողի կողմից:
2. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
3. Բոլոր միավոր ապրանքները 1-ին կամ 2-րդ էջում պետք է ունենան «Հայաստանի Հանրապետության նվեր է. վաճառքի ենթակա չէ» նշումը: Նշումը կարող է կատարվել ՍՊԸ-ի համար ցանկացած ընդունելի տարբերակով (տպագրած, կնքված, սոսինձված և այլն):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Վ. Մնացականյան

Հավելված N 2
« 11 » 09 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆՄԱՊՁԲ-20/62 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 30-ը/	Ընդամենը
1	22111100/26	Ուսուցողական գրքեր-1									80000	80000	80000	80000	**80000**
2	22111100/27	Ուսուցողական գրքեր-2									120000	120000	120000	120000	**120000**
3	22111100/28	Ուսուցողական գրքեր-3									160000	160000	160000	160000	**160000**
4	22111120/35	Գրադարանի գրքեր-1									120000	120000	120000	120000	**120000**
5	22111120/36	Գրադարանի գրքեր-2									120000	120000	120000	120000	**120000**
6	22111120/37	Գրադարանի գրքեր-3									120000	120000	120000	120000	**120000**
7	22111120/38	Գրադարանի գրքեր-4									450000	450000	450000	450000	**450000**

8	22111130/7	Բառարաններ-1									200000	200000	200000	200000	**200000**
9	22111130/5	Բառարաններ-2									300000	300000	300000	300000	**300000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Վ. Մնացականյան